ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 21/01/01

ք.Երևան

25 հունվարի 2021թ.

ՀՀ քաղաքացի Սուրեն Սարումյանը, այսուհետ՝ «Վաճառող», մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

ստորագրեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով Գնորդին որպես սեփականություն հանձնել սույն Պայմանագրի 1.2 կետում նշված ապրանքները (այսուհետ նաև՝ Ապրանքներ), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքները և վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում:

1.2 Սույն Պայմանագրով Վաճառողը պարտավորվում է Գնորդին հանձնել «Հաղորդ 2019», «Արցախ 2019, Մենավոր ծառ», «Արցախ ձմեռ» անվանումներով նկարները:

1.3 Սույն Պայմանագրով սահմանված Ապրանքները Վաճառողի կողմից հանձնվելու են Գնորդին ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 հասցեում, սույն Պայմանագրի ստորագրման օրը՝ 2021թ.-ի հունվարի 25-ին:

1.4 Վաճառողը երաշխավորում է՝ Ապրանքների միակ իրավատեր լինելու, Ապրանքների նկատմամբ բացառիկ իրավունքները իրեն ամբողջ ծավալով պատկանելու, Ապրանքների՝ գրավի, առուվաճառքի կամ այլ պարտավորության առարկա կամ որևէ այլ կերպ երրորդ անձանց իրավունքներով սահմանափակված չլինելու փաստերը:

1.5 Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրով Վաճառողը Գնորդին է փոխանցում Ապրանքների նկատմամբ իրեն պատկանող բոլոր բացառիկ գույքային իրավունքները՝ ամբողջ ծավալով:

1.6 Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքները Կողմերի միջև համաձայնեցված ժամկետում Վաճառողի կողմից Գնորդին չհանձնելու դեպքում իր հայեցողությամբ հրաժարվել Ապրանքներից կամ սահմանել Ապրանքների հանձման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված բնութագրին չհամապատասխանող, ապրանք՝

i. պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

ii. չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքներով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.2 կետով նախատեսված տույժը.

iii. պահանջել համաչափ իջեցնելու ապրանքի գինը.

iv. հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքների համար վճարված գումարը, եթե Ապրանքների համար արդեն իսկ վճարվել է:

2.1.3 Չվերացվող թերություններ հայտնաբերելու դեպքում, իր ընտրությամբ՝

i. հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը.

ii. պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ապրանքը սույն Պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով.

2.1.4 Եթե հանձնվել են Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանքներ, ապա՝

i. պահանջել լրացնել Ապրանքների պակաս հանձնված քանակը և վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

ii. հրաժարվել հանձնված Ապրանքներից և դրանց դիմաց վճարելուց, իսկ եթե Ապրանքների համար արդեն իսկ վճարվել է՝ պահանջել վերադարձնել վճարված գումարը:

2.1.5 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

i. ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքները և հրաժարվել մնացած ապրանքներից.

ii. հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից.

iii. պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագիրը լուծելուց հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանքներ՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության, ինչպես նաև Ապրանքներն այլ անձից ձեռք բերելու համար Գնորդի կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերի չափով:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Ընդ որում, Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

i. հանձնվել է անպատշաճ որակի և/կամ տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

ii. հանձնվել է պակաս քանակով Ապրանք, որը չի կարող լրացվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

iii. խախտվել է Ապրանքների հանձման համար սույն Պայմանագրով սահմանված ժամկետը

2.1.8 Զննել Ապրանքները և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան հանձնված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքներից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքների պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով հանձնված Ապրանքներն ընդունելու դեպքում, Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքների որակին, քանակին, տեսականուն վերաբերող Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքների բնույթից և նշանակությունից:

2.2.5 Ապրանքների հանձման համար անհրաժեշտ լինելու դեպքում, Վաճառողի ներկայացուցիչներին տրամադրել Գնորդի տարածք մուտք գործելու հնարավորություն:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով հանձնված Ապրանքները:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով հանձնված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքների համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Գնորդի համաձայնությամբ Ապրանքները հանձնել վաղաժամկետ:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի, քանակի, տեսակի Ապրանքներ՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում և հասցեով, իսկ Գնորդի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում՝ տրամադրել նաև Ապրանքների որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

2.4.2 Գնորդին հանձնել Ապրանքների պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը, եթե այդպիսիք առկա են և կիրառելի են Ապրանքների բնույթից ելնելով:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանքներ:

2.4.4 Պայմանագրի 2.1.2 կետի ii ենթակետով, 2.1.3 կետի i ենթակետով, ինչպես նաև 2.1.4 կետի iii ենթակետով նախատեսված դեպքերում, ապահովել Ապրանքների հանձնումը՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետում:

2.4.5 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքները կամ ողջամիտ ժամկետում այլ կերպ տնօրինել դրանք և հատուցել Ապրանքները պատասխանատու պահպանության ընդունելու, դրանք իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված՝ Գնորդի կատարած անհրաժեշտ ծախսերը:

2.4.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.7 Պայմանագրի 2.1.6 կետով նախատեսված իրավիճակներում Պայմանագրի լուծման դեպքում, Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրով հանձման ենթակա մեկ նկարի արժեքը կազմում է 55.555 (հիսուն հինգ հազար հինգ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, որին համապատասխան Պայմանագրի ընդհանուր արժեքը (3 (երեք) նկարի համար) կազմում է 166.665 (մեկ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ: Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից իրականացվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման ծախսերը:

3.2 Գնորդն իրեն հանձնված Ապրանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Հանձնված Ապրանքների դիմաց վճարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտի երկկողմանի հաստատվելուց 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Վճարման ամսաթիվ է համարվում Գնորդի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

3.4 Բանկային ծախսերը Գնորդի բանկում կատարում է Գնորդը, իսկ Վաճառողի բանկում՝ Վաճառողը:

4. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է հանձնված Ապրանքների որակի համապատասխանությունը կիրառելի ստանդարտների, կանոնների, նորմերի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Ապրանքներն ընդունվում են Վաճառողի և Գնորդի միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ: Ապրանքները հանձնելու օրը Վաճառողը Գնորդին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5.2 Հանձնման-ընդունման ակտը ստորագրվում է, եթե Ապրանքները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման ակտը չի ստորագրվում և Գնորդը՝

i. հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցառումները.

ii. Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման ակտը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ Ապրանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե Պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում Ապրանքները կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա Ապրանքները համարվում են ընդունված և Պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում Ապրանքների որակի, հանձման ժամկետի և տեսակի պայմանի պահպանման համար:

6.2 Ապրանքների հանձնման համար Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի խախտման դեպքում, Վաճառողից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հանձման ենթակա, սակայն չհանձնված Ապրանքների գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժը հաշվարկվում է Կողմերի միջև համաձայնեցված հանձնման ժամկետից մինչև Կողմերի կողմից սույն Պայմանագրով համաձայնեցված ծավալներով պատշաճ որակի և տեսակի պայմանի պահպանմամբ Ապրանքները Գնորդին փաստացի հանձնելու օրն ընկած ժամանակահատվածի համար:

6.3 Պայմանագրի 1.2 կետում նշված բնութագրին չհամապատասխանող Ապրանքներ հանձնելու դեպքում, Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 20 (քսան) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

6.5 Հանձնված Ապրանքների դիմաց վճարելու սույն Պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, Գնորդի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2 Կողմը, որի մոտ ծագել է ֆորսմաժորային իրավիճակ, պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում, սակայն ոչ ուշ, քան նման իրավիճակի վրա հասնելուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցի մյուս Կողմին նման իրավիճակի առաջացման, իսկ հետագայում նաև՝ բնականոն պայմանների վերականգման մասին, հակառակ դեպքում կզրկվի ապագայում ֆորսմաժորային իրավիճակը որպես հիմնավորում օգտագործելու իրավունքից:

7.3 Ֆորսմաժորային իրավիճակի վերաբերյալ հանդիպակաց Կողմին ծանուցում ուղարկելու պահից Կողմի համապատասխան պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջը համարվում է կասեցված մինչև Պայմանագրի կատարման համար բնականոն պայմանների վերականգնումը:

7.4 Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

8.1 Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին, պայմաններին, արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում, փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.2 Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի լուծումից հետո 3 (երեք) տարվա ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը, գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրվեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրվելու պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2 Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

9.3 Սույն Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց Կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.4 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

9.5 Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակներում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.6 Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

9.7 Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

9.8 Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

9.9 Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

9.10 Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային ժամվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված

վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

9.11 Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

9.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.13 Պայմանագիրը ստորագրվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

9.14 Սույն Պայմանագիրը ստորագրող Գնորդի ներկայացուցիչը սույնով հաստատում է, որ ունի բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Գնորդին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում: Սույնով Վաճառողը հավաստում է, որ հանդիսանում է գործունակ քաղաքացի և գիտակցում ու ընդունում է իր կողմից ստորագրված Պայմանագրով ծագող պարտավորությունների բնույթը, էությունը:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող

Սուրեն Սարումյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դ. Մալյանի փող., շ. 9, բն. 39
Անձնագիր՝ AM0403100, տրված՝ 02.08.2011թ.-ին, 005-ի կողմից
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570070231360100

Սուրեն Սարումյան

Գնորդ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062

«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն